

ՄԵԾՆ ՍԱՐՈՒԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ...

Posted on December 26, 2020 by Keghart



Այստեղիս այս է սրտան պատկերը: 2021-ին պիտեալ Հայաստանի ռեառորաներուն և պարերուն մէջ նկատի դեւտ է աւանդալ դէ է մատուցողը: Հանեցէ կարգալ քիւ 1 ցուցանեց և պրամորկըը:

Category: [Opinions](#)





Արտանուստի ստեղծողը: 2021-10 սկսելով Հայաստանի սեռաբռնական և սպառնալից մեջ մտնելի պահին է ստեղծել այս լուրջ և անուշաբույր շեմկոկի կարգով, թե չ ցուցանելու և սրտախնայող:

Մշակում՝ Մ.Գ.-ի,

Յունուար 2020

Ծանօթ.- Յետ մահու վերաշարադրումի փորձ մը գալիք օրերու լոյսին տակ:

Վերջերս սփիւռքահայ յայտնի Սարուխանազետ Բ.-Էն լուր ստացանք թէ սփիւռքահայ բոլոր ժամանակներու մեծագոյն երգիծանկարիչ **Ալ. Սարուխան** յաջողէր է երկնային Եգիպտոսի մօտ գտնուող Ռուսական Դաշնութեան դեսպանատունէն մուտքի արտօնագիր (վիզա) ստանալ եւ քանի մը օրով մեկնիլ Հայաստան: ՌԴ դեսպանատունը սիրայօժար կերպով արտօներ է՝ ըսելով թէ ինք ՌԴ որեւէ տարածք մեկնելու համար որեւէ ատեն արտօնագրի պէտք չունի: Գլխաւոր դեսպան Ալեոշա Բաբաեւը աւելցուցեր է նաեւ թէ մեծանուն երգիծանկարիչը երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներուն ստեղծեր է այնպիսի գլուխ-գործոցներ, որոնց մէջ ան երգիծեր է Նացի Գերմանիան եւ Ֆաշիստ Մուսոլինին՝ չմոռնալով փառաբանել Կարմիր Բանակի հրամանատարներն ու ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴ Ստալինը:

Եւ այսպէս Ալ. Սարուխան յաջորդ օրն իսկ սկսեր է պտըտիլ Երեւանի *ռեստորաններն ու պարերը* (bar), որոնք միշտ լեցուն եղած են հակառակ երկրին մէջ տիրող համատարած սեւագգեստութեան ու մռայլութեան: Ան հաւատարիմ մնալով իր բարեմիտ քննադատական ոգիին, վերանայեր է 1960 թուականին գծած իր երգիծանկարներէն

մեկը («Մենք մեր ակնոցով») եւ կարգ մը փոփոխութիւններ կատարելով դրկեր է առ որ
անկ է:

Ստորեւ կը ներկայացնենք զայն: Կը փափաքինք յիշեցնել թէ բնօրինակին մէջ բոլոր
խօսքերը հայատառ եղած են, նոյնիսկ յունարէնները, բայց նկատելով մեր երկրին մէջ
տիրող կացութիւնը, գարեջրատան յաճախորդներուն մեծ մասին տրամադրութիւններն
ու լեզուն, խօսքերը փոխարինած է ռուսերէն լեզուով:

Ընթերցողները կրնան թարգմանութեանց հետեւիլ ըստ թիւերու յաջորդականութեան:
Բարի վայելում:

- 1.- Ուշադրութեամբ կարդալ վերը ձախ կողմի ցուցանակը:
- 2.- *Մի խացիմ ֆիսթաշէք*: Մենք պիտտակ կ'ուզենք:
- 3.- *Քծէ նաշէ փիվօ*: Ի՞նչ եղաւ մեր գարեջուրը:
- 4.- *Ու թ(ց)իպիա եէ՞սթ խարոշայա վոտքա*: Դուք լաւ վոտքա ունի՞ք:
- 5.- *Ա՛խ, թուքը Փուրփիսկայա վոտքա*: Ա՛խ, միայն «Փուրփիսկայա» վոտքա:
- 6.- *Աֆիցա՛նթ*: Մատուցո՛ղ...
- 7.- *Սլուշայու*: Այո՛, կը լսեմ ձեզ:

There are no comments yet.